



« ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՆՈՅԸ ՈՐ ԲԵՏԻ ԳԱՆ » ԳՈՒԿ . ԺԸ . 16 :

ՀԱՏՈՐ ԺԱ .


ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ , ԴԵԿՏԵՄԲԵՐ 1 , 1882

ԹԻԻ 12

ՏՈՒՔԻ ՉԿԱՆ ՈՐՍ

Մեծին Բրիտանիոյ տառեխ ձկան (շէն) որսը կոյ աւելի քան 1,200 տարիէ հետէ , և է մեծ հարստութեան աղբիւր . Առաջ կը կարծուէր թէ այս ձկան բուն տեղն էր հիւսիսային սառուցեալ ծովն , և թէ անկէ կու գար դէպ ի հարաւ ջերմադոյն տեղեր : Հիմա կը կարծուի թէ ասոր բնիկ տեղն է Արլանդեան ուղիւս նոսր՝ ոչ շատ հեռու ցամաքէն ուր կու գայ ձու ածել : Որտի ժամանակը կը սկսի մոյլա ամառն Նորվեկիոյ մօտ : Յուլիսին կու գայ ձու կը հիւսիսային Սկոտիոյ եզերքը , և աշնան և ձմեռան եղանակ ներսն կը գտնուի մեծ բազմութեամբ Անգլիոյ եզերքը : Պատկերին վերի կողմը կը տեսնուի ձկնորսաց նաւախումբ մը որ Անգլիական քաղաքէ մը կ'ելլէ ճամբայ : Նաւերն են այլ և այլ մեծութեամբ՝ չորսէ մինչև տասու երկու մարդով :

Նաւերուն մէջ կան յատուկ տեղեր ուղիւսներու , աղի և ձկանց համար : Մեր պատկերին մէջտեղ կը տեսնէք ձկնորսաց նաւի մը նաւապետը իր փոքր սրբուով : Ասանք կը դիտեն տառեխներ , և վարժ են տեսնել անոնց շարժումը : Տառեխ որսալու յարմարագոյն ժամանակը զիշերն է : Ուսկաններն արևուն մրտնեղն առաջ առասանօք իրարու կապուած կը կենան պատրաստ : Երբ նաւապետը կը տեսնէ հեռուէն տառեխ



ներուն դայր , ձայն կու տայ ձկնորսաց ելլել նետակուռկանները : Յակոն թօ թափել կ'ելլեն ձկնորսը իրենց խորշերէն և կը սկսին տանել դէպ ի ջուրն իւրենց ուռկաններուն երկայն շարք : Երբ ուռկանները ծովը կը նետուին , ձկնորսը կը հանգչին վայր մի մինչև հրաման կը սրուի նաւապետէն քաշել ուռկանները : Այս կը տեսնուի մեր պատկերին վարի մասին մէջ : Մարդ մը կեցած է ձեռքը լծակի մը վրայ ուրով կը դարձունէ գերան մը որոյ վրայ կը պատտաի ուռկանին ծայրը : Ուռկանն այսպէս դերանին վրայ պատտաւելով կ'ելլէ վեր , և ձկնորսը կը սկսին ուռկանին ծակերէն հանել առնուլ ձուկերը : Չուկերն ուռկանէն առնուելով իսկոյն կ'աղուին և կը գրուին իրենց յատուկ տեղը , և կը մնան հոն մինչև նաւը կը հասնի ցամաք :

Յամաք հասնելէն ետքը ձկնորսը կը լուան ձուկերը , ինչպէս կը տեսնուի մեր պատկերին վերի մասին մէջ , յաջմէ , և ապա կը զրկուին վաճառանոց , և կամ չորցուելու համար ապխտանոց : Ապխտանոց , ինչպէս կը տեսնուի մեր պատկերին ձախ կողմը , մեծ քարայտակ սրահ է ապխտակամած որմովք ձուկերը կախելու համար : Քարայտակին վրայ կը վառեն կաղնոյ փայտի խարոյկ , որոյ ծովը կը չորցունէ ձուկը և կու տայ անոր գեղեցիկ կարմրագոյն երանգ : Չուկերը չորնալէն ետքը կը գրուին կարամներու մէջ և կը զրկուին ի վաճառ :

Տառեխի ձկնորսութեան մեծութիւնն անկէ յայտնի է որ տարին աւելի քան 900,000,000 տառեխ կ'որսացուի Անգղիա և Սկոտլան միայն : Տառեխն արդարև սեղ սեղ քիչ է , բայց շատ սեղ կը գտնուի ամբառաւորութեամբ , և թէպէտ հիմա այսչափ ահագին բազմութեամբ կը վաճառուի , է սակայն այնչափ առատ որչափ յառաջ ժամանակաւ էր :

**ԽՕՍՔԵՐ ՈՐ ԿԸ ԽԱՔԵՆ**

Օր մը մարդ մը փայտ առաւ իւր որդւոյն սղոցելու : Տղան չուղեց ընել այս գործը , և հայրը երթալէն ետքը վար նետեց սղոցը որ կտարեցաւ : Տղան ինքնին ըսաւ , «Ես չկտարեցի սղոցը , ան ինքնիրմէն կտարեցաւ :» Եւ այսպէս խորհելով ջանաց խարել ինքզինք , բայց իւր սրտին մէջ գիտէր թէ առա էր իւր խորհուրդը , և կը վախնար հօրը քով երթալու : Անգամ

մ'ալ մայր մը իւր որդւոյն , որ դըպրոցէն դեռ նոր տուն եկած էր , ըսաւ , «Ժամը վեցն է և ձեր դպրոցը կ'արձակուի ժամը չորսին , մինչև հիմա մի էիր , աղաս :» «Ո՛հ , մայր ,» ըսաւ Արամ , «երբ գնդակ կը խաղանք , կը մտնանք ամէն բան , չենք խորհիր ժամանակին անցնելուն կամ տուն գալու վրայ :» Տղան մայրը խարուեցաւ Արամին պատասխանէն , և այնպէս կարծեց թէ նա իւր ընկերներուն հետ կը խաղար , բայց աղան այն օրը բնաւ խաղցած չէր , և վարժապետը բանտարկած էր զնա զի դասերը սորված չէր : Արամ այս բանը ըսել չէր ուզեր իւր մօրը , կ'ուզէր որ նա կարծէ թէ կը խաղար : «Ի՛նչ ա մօթ և մեղք է որ կը ջանաս խարել քու մայրդ :» ըսաւ բան մը Արամին սրտին մէջ երբ կերակարի սեղանը նստած էին : «Հոգս չէ» ըսաւ աղան ինքնիրեն , «հոգս չէ , ես սուտ չխօսեցայ , ես չըսի թէ կը խաղայի :» «Բայց ,» ըսաւ ձայնը , «դու գործածեցիր բառեր որ մօրդ կարծել տուն թէ կը խաղայիր , և այդպէս խօսիր սուտ խօսելու հաւասար է :»

Ի՛նչ կը խորհիր , փօքը ընթերցողներ , Արամ սուտ խօսեցաւ : Սրբ , եթէ գործածենք բառեր որովք կը ջանանք ծածկել ճշմարտութիւնը , սուտ խօսած կ'ըլլանք : Արամայ սուտը շատ գէշ սուտ էր , զի ճշմարտութեան երևոյթունէր : Սուտ մը որ ճշմարտութեան կը նմանի՝ ամենէն գէշ տեսակն է :

Թարգմանեց Անգղերէնէ  
ՅԱԿՈՒԻԿ Յ. ԳՈՐՏԱՅԵԱՆ

**ԲՆԱԿԻՉՔ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՈՎԿԻԱՆՈՍԻ ԿԳՋԵՍՅ**


Եթէ ընթերցողք նային իրենց աշխարհայոցը , պիտի տեսնեն թէ խաղաղական ովկիանոսի մէջ , ի մէջ հարաւային Սմերիկայի , Ասիոյ և Աւստրալիոյ , կան բազմութիւնք կղզեաց որոյ գրեթէ բոլորը կը կոչուին «Հարաւային ովկիանոսի կղզիք :»

Միւս երեսին վրայ դրուած մեծ պատկերին մէջ կը տեսնուին այս կղզեաց բնիկներէն ոմանք : Դեռ շատ ժամանակ չէ , բոլոր այս կղզեաց բնակիչներն հեթանոս էին , բայց ջանիւ Գրիստոնեայ միսիոնարաց անոնցմէ ոչ սակաւք ընդունեցան Գրիստոնէութիւնը : Թիւ 1 և 3 են բնիկը կղզեաց խմբի մը որ է ի հիւսիսայ Նոր Կուինէյի : Առաջինն ունի քիթը զարմանալի զարդ մը , որոյ ծայրերը կան

կարմիր ոլուններ (պիղէլեա) : Ոչ կանայք միայն , այլ և արք կը կրեն այս անհեղեղ զարդը : Թիւ 3 ին դէպքը կը ցուցնէ թէ զգայական հեշտութիւններ միայն կը սիրէ : Ունի տեսակ մը կարմիր հողով ներկուած մազեր , ուստի և ահեղ տեսիլ : Թիւ 2 կնոջ մը գէմքն է Սամուան կղզիներէն որ Նոր Զելանտայի հիւսիսային կողմը կ'իյնան : կղզեաց այս խմբին կանայք հարաւային ովկիանոսի կղզեաց բնակիչներուն մէջ համեստագոյն և առաքինագոյն են : Թիւ 4 և 6 են բնիկը Նոր Զելանտայի : Առաջինն է Հէֆանուն ցեղապետը , որ անգամ մը զնաց Անգղիա և ուսաւ Անգղիերէն խօսել , բայց յետոյ արեւց իւր համբաւը Նոր Զելանտայի բնակիչներէն բաւական մարդիկ կատարելով և քաղաքներ կործանելով : Միւսը Կաեա է , այսինքն մարմնայն վրայ ունի վէտեր , ըստ հին սովորութեան հարաւային ովկիանոսի բնակչաց : Թիւ 5 է Գրիստոնեայ կին թանկա կղզիներէն : Ի՛նչ խախր այս և 3 թուոյն մէջ , Թիւ 7 է բնիկ Յիսի կղզեաց : Յառաջագոյն այս կղզիներուն մարդիկը ոչ միայն հեթանոս էին , այլ և մարդակեր : Հիմա ասոնց մեծ մասը Գրիստոնեայ է : Թիւ 8 է բնիկ Սոլոմոնեան կղզեաց : Այս կղզեցիք կը թուին լինել բոլոր մարդկային ցեղերուն վայրենագոյնը : Են նկնահասակ և սեւա , կարճահեր և զանգուր , երկայնարաղուկ և աջօք արիւնախանձ : Ասոնց մի միայն գովելի բանն է երաժշտութեան սէրը : Թիւ 9 է բնիկ Գարոլինեան կղզեաց : Այս կղզիք Բալինեզիոյ կղզեաց մէջ կարևորագոյնք են : Ասոնցմէ ոմանց մէջ կան հին շինուածներու նշանաւոր աւերակներ , որ կը ցուցնեն թէ ժամանակաւ քան այժմու ցեղը շատ աշնուագոյն ցեղ մը կը բնակէր այս նշանաւոր կղզեաց գեղեցիկ հովիտները և հովտաուն բլուրները :

**ԺԱՄԱՆԱԿԷՆ ՈՒՇ**

Երկաթուղոյ կառախումբ մը կայծակի արագութեամբ յառաջ կ'ընթանար : Կառախումբն եկած հասած էր մօտ այն տեղոյն ուր ճամբան կը բաժնուէր երկու քի , բայց գործակալը որ վերէն և վարէն եկող կառաչուներուն սպասելու նշան պիտի տար , քիչ մը ուշ մնացած էր , այնպէս որ վեր երթալու կառաչուն սպասելու տեղէն անցած էր : Գործակալը կը յուսար սակայն թէ ժամանակ կար դեռ կառաչուն վտանգէ զգուշացնելու ,



բայց ահա յանկարծ գիտնացէն կառա-  
խումբը բրդաւ, և ակնթարթի մը մէջ  
ստոկալի ընդհարում մը տեղի ունե-  
ցաւ : Շառաչին մը, գոռում և գո-  
չին ըտեցաւ, և յիստն հոգւոյ յան-  
կարծական մահը այս գործակալին  
քիչ մը ուշ մնալուն ողբալի հետե-  
ւանքն եղաւ :

Մեծ պատերազմ մը կը մղուէր,  
գումարսակ գումարսակի ետեւէ կը

յարձակէր բլրոյ մը գագաթնան վրայ  
բանակեալ թշնամոյ մը վրայ : Ամբան  
արևը մարը կը մանէր, յամառութեամբ  
անձնատուր շեղողներու գէմ նոր զօ-  
րաց գունդ մը կ'երթար, վերջնական  
յարձակմամբ մը գիրքը գրաւել պէտք  
էր, ապա թէ ոչ ամէն բան պիտի  
կորսուէր : Զօրաւոր խումբ մը յոգ-  
նութիւն կանչուած էր, և եթէ այս  
խումբը ժամանակին հասնէր, ամէն

բան աղէկ պիտի ըլլար : Մեծ յաղ-  
թականը, Նարոյէնն, այս խումբին  
հասնելուն աներկրայ ըլլալով իր պա-  
հետի զօրքը յարձակող գումարաւ-  
կի մը վերածեց և գանձք բլուրն ի վեր  
քշեց : Բոլոր աշխարհ գիտէ վախճա-  
նը, սպասուած խումբը չերեցաւ, կայ-  
սերական պահապան զօրքն ետ մղ-  
ուեցան, վաղերը կորսուեցաւ, Նա-  
րոյէնն բռնուեցաւ, և Սուրբ Հեղինէ


կղզին արքորուելով հոն մեռաւ ար- սորանաց մէջ : Այս մեծ աղէտը պա- տահեցաւ , քանզի զօրապետ մը իր ժամանակէն ուշացաւ :

Նշանաւոր ընկերութիւն մը վաճառ- աւականական ակրիլի մը մէջ սնանկա- ցեալ հրատարակուեցուն դէմ ընդ- երկար մարտաւած էր , քանզի Գալի- ֆոունիոյ մէջ մեծ գումարներ ունէր , կը յուսացուէր թէ այս ինչ ատեն մեծ գումար մը ստակ պիտի ընդունէր , և եթէ այն ստակը ժամանակին հաս- նէր , ընկերութեան պատիւը , համ- բար և ապագայ յաջողութիւնը ա- պահով պիտի բլլային , բայց շարժմ շարժի ետևէ անցաւ և ոսկին չեկաւ : Վերջապէս չարաշուք օրը հասաւ յո- բում ընկերութիւնը պարտական էր հատուցանել ահազին գումարներ : Շոգենաւին հեռագիր զարնուած էր , բայց տեսնուեցաւ թէ չոգենաւն ըս- պատուած ստակը չէր բերած , և ըն- կերութիւնը մնաց ձեռնունայն : Շո- գենաւը միւս անգամին գրեթէ կէս միլիոն սակի բերաւ , սակայն շատ ուշէր , ընկերութիւնը սնանկացած էր գոր- ծակալաց անհոգութեամբ :

Գատապարտեալ մը կախաղանը կը տարուէր սպանուելու : Սա մարդաս- պանութիւն մ'ըրած էր , բայց ամե- նամեծ գրգիռ ազդող պարագաներու տակ , ուստի և հասարակաց համակ- բութիւնն անոր կողմն էր : Հազարա- լորք ստորագրած էին աղերսազիր մը որով կը խնդրէին վճիռը յապաղեցը- նելու , և նպատակաւոր պատասխան մը առջի գիշերը կը սպասուէր : Թէև դա- տաւորը վտահ էր թէ պատասխանը պիտի դար , սակայն վճռոյն գործա- դրութեան ժամանակը անցնելու վրայ էր , և դեռ պատգամաւորը չերեցաւ : Վերջին րոպէն անցաւ , դատապար- տեալը կախաղանն ելաւ , գլխարկն ա- չուրնբերուն վրայ քաշուեցաւ , չուանը քաշուեցաւ , և դատապարտելոյն ան- կենդան մարմինն օդին մէջ կախուած մնաց : Ճիշդ այն վայրկեանին ձիաւոր մը երևցաւ . որ բլրին ի վար կ'արշա- լէր , և ձին քրտինքի և վրիպի մէջ ծածկուած էր : Ձիաւորը հասաւ իւր հետ ունենալով ներողութեան թուղթը զոր աջ ձեռքով կը շարժէր . յիտաի նա էր պատգամաւորը , բայց շատ ուշ եկաւ , և մարդը մեռած էր անարգ մահուամբ մը , քանզի պատ- դամարբը հինգ րոպէ ուշ մնացած էր :

Այսպէս կը պատահի գրեթէ միշտ կենաց մէջ : Ամենէն աղէկ զգուշու-

թիւնով պարտասուած կարգադրու- թիւնները , անհասից բախար , ազգաց յաջողութիւնը , պատիւ , երջանկու- թիւն և կեանք իսկ կը զոհուին , քան- զի մէկը ժամանակէն ուշ կը մնայ : Կան մարդիկ որ միշտ խեղճ կը մնան , և չեն յաջողիր ինչ որ ալ ընեն : Ին- չո՞ն , քանզի ժամանակին չեն կատա- բեր իրենց գործը : Կան ուրիշներ որ բարեկարգութիւնը կամ ապաշխա- բութիւնը կ'ուշացնեն տարիէ տարի , մինչև որ մահը կը յափշտակէ զանոնք , և նոքա կը կորսուին անապաշխար , քանզի ժամանակէն ուշ մնացած են յախտեան : Կարևոր կէտի մը մէջ հինգ րոպէն տարիներ կ'արժէ : Ար-



Ս. ԲԵՆՆԱՐԻՈՍԻ ՀԻՒՐԱՆՈՅԸ

դարև հինգ րոպէ միայն շատ կարճ ժամանակ է , բայց ի՞նչ մեծ գործեր կատարուած են այնչափ կարճ միջոցի մէջ . կեանքեր կորսուած կամ վեր- կուած են , և ազգաց բախար յաջո- զած կամ կորսուած է հինգ րոպէ- ներու հող տարուելով կամ չտարուե- լով :

Ուրեմն , մեծ փոյթ ընելու է որ աղայք իրենց մատաղ հասակէն վար- ժուին ճշտապահութեամբ , և սորվին զգու- շանալ բան մ'ընելու բուն ժամանակն անցնելէ առաջ :

Նիկոմիդիա  
Թարգմանեաց յԱնգղիականէն  
Գ.Ս.ԻՌՍ Կ. ԲԷՄԱԼԵԱՆ

Ս. ԲԵՆՆԱՐԻՈՍԻ ՀԻՒՐԱՆՈՅԸ  
Զուիցեբայի Մարդիների և Իտալիոյ Սոսոցա քաղաքներուն մէջտեղ կայ Ալ- պեան լեռներն անցնելու կիրճ մը որ կը կոչուի Ս. Բեռնարդոսի (Սէն Պէր- նար) անցք : Այս կրճին բարձրագոյն գագաթն է 8.000 ոտք ծովէն վեր : Հոն խորածորի մը մէջ Մենիմոնցի Ս. Բեռնարդոսիցն մեռատան մը 962 ին- կը կարծուի թէ աւելի հին ժամանակ կար հոն մեռատան : Հռոմիայեցոյ բանակներն այն կրճէն կ'անցնէին Ալ- պեան լեռները , անկէ անցաւ նաև Մեծին կարողութիւն զօրքը , և 1800 ին Նաբոլէոն Մեծ անկէ անցաւ Զուիցե- բայէ Իտալիա : Ս. Բեռնարդոսի միան-

ձուռք ունէին կանխու առատ եկամուտ , և մեռատանը կրնար ընդունել մինչև 600 հոգի , բայց հիմն եկամուտը կորսուած է , և միանձուռք կ'ապրին բարերարաց ողորմութեամբ : Մինչդեռ եր- կաթուղի չէր կրնար անցնիլ Ալպեան լեռներէն ստորերկրայ ճամբով , ինչպէս կ'անցնի հիմն , շատ դժուարին էր այս կրճէն անցնիլ , և ճանապարհորդք կը հանդիպէին սուկ սաստիկ բքոց և փոթորկաց : Միանձուռք կը պահէին անսակ մը գեղեցիկ շուներ , զորս կը կրթէին երթալ յօգնութիւն փոթորկէ արգել- ուած ճանապարհորդներու՝ տա- նելով անոնց հաց և զինի զորս միանձուռք կը կապէին շուներուն վիզը : Այս շուներն երկար ժա- մանակ այսպէս շատ մարդիկ ա- զատած են մահուան վտանգէ :

Երևելի փիլիսոփայ մը ըսած է թէ որպէս զի մարդիկ սորվին թէ ինչ է ճշմարիտ բարոյականութիւն , կը խրա- տեմ զանոնք կարգալ ոչ ուրիշ գերք , այլ Նոր կատարանը միայն :

Ինչպէս որ հայր մը կը զթոյ իր որ- դոցը վրայ , այնպէս ալ Տէրը կը զը- թոյ իրմէն վախոյսներուն վրայ :

Որդեակ իմ , թէ որ քու սիրազ ի- մաստուն բլլայ , իմ սիրաս ալ պիտի ուրախանայ :

Ա. Ի. Ե. Տ. Ա. Բ. Ե. Բ. Ե. Բ.  
ԱՄՍՍԱԿԱՆ (Հայերէն գրք , և Հայ- Տճիւրէն) , փոսթայի ծախքով , տարին 6 դահեկան է :

Ամերիկայի Մեխիմարաց ընկերութեան կողմէն խմբագիր ճ. Բ. ԿԲԻՆ Ֆիլճանճըլար Եօզուլու , Ամերիկան իսն

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՆՈՒ ՊՈՅԱՆՆԵՆ